Արձանագրություն N 2

«ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-33/15» ծածկագրով կայանի կարիքների համար KR5 «KUKA» կամ SRV 16 «REIS» կամ համարժեք տեսակի ռոբոտատեխնիկական համակարգի եռակցման սարքի նախագծման, պատրաստման, մատակարարման, տեղակայման, կարգաբերման, փորձարկման և սարքը շահագործող անձնակազմի ուսուցման աշխատանքների գնման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Մեծամոր 11 հունվարի 2016թ.
ժ.11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Յամբարձումյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Բաղդասարյանը, Կ. Յակոբյանը, Ա. Մկրտչյանը, Ա.Արշակյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հակոբյանը
«ՎԵԿՏՈՐ ԳՐՈՒՊՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Կուդրյավիցկին

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-33/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սկսեց իր գործունեությունը:

1. «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-33/15» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացում

Յրապարակվեց «ՀԱԷԿ-ԲԸԱՇՁԲ-33/15» ծածկագրով՝ կայանի կարիքների համար KR5 «KUKA» կամ SRV16 «REIS» կամ համարժեք տեսակի ռոբոտատեխնիկական համակարգի եռակցման սարքի նախագծման, պատրաստման, մատակարարման, տեղակայման, կարգաբերման, փորձարկման և սարքը շահագործող անձնակազմի ուսուցման աշխատանքների գնման ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 190.000.000 (մեկ հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և նախագահողին փոխանցեց հայտի գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը:

ա. Ընդունել ի գիտություն, որ նշված ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ անձը.

| Մասնակցի անվանումը և հասցեն |
| --- |
| **«ՎԵԿՏՈՐ ԳՐՈՒՊՊ» ՍՊԸ**<br>ՌԴ, ք.Մոսկվա, Իլիմսկայա փող., տուն 2, գրասենյակ 5<br>հեռ. 8495 787-49-12, էլ. փոստ aleksei@vektor-grupp.ru |

2. Ուսումնասիրելով գնային առաջարկի ծրարը, դրանում գտնվող փաստաթղթերը (կցվում են)՝ հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

• «ՎԵԿՏՈՐ ԳՐՈՒՊՊ» ՍՊԸ-ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվեց որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3. Ներկայացվեց մասնակցի գնային առաջարկը.

| Չափա-բաժնի համարը | Աշխատանքի անվանումը | Մասնակցի ներկայացրած գնային առաջարկը արտարժույթով և ՀՀ դրամով (առանց ԱԱՀ) (26.11.2015թ ԿԲ կուրս 510 դրամ 54 լումա) |
| --- | --- | --- |
| 1. | «ՀԱԷԿ» ՓԲԸ KR5 «KUKA» տեսակի ռոբոտատեխնիկական համակարգի եռակցման սարքի նախագծում, պատրաստում, մատակարարում, տեղակայում, կարգաբերում, փորձարկում և սարքը շահագործող անձնակազմի ուսուցում | 257.000 եվրո (131.208.780 դրամ – մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երկու հարյուր ութ հազար յոթ հարյուր ութսուն դրամ) |

Հիմք ընդունելով այն, որ «ՎԵԿՏՈՐ ԳՐՈՒՊՊ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը բավարարում է հրավերով սահմանված թիվ 1 չափաբաժնի պահանջներին և չի գերազանցում նախատեսված ֆինանսական հատկացումներից, որոշվեց նշված չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՎԵԿՏՈՐ ԳՐՈՒՊՊ» ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:**

4. Հայտերի գնահատման արդյունքների նպատակով առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ՎԵԿՏՈՐ ԳՐՈՒՊՊ»** ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:**

5. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկու օրինակ հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ը, ք.Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենք հասցեում:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:**

**Հանձնաժողովի նախագահ՝** .................... **Ա. Համբարձումյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** .................... **Ռ. Բաղդասարյան**

.................... **Կ. Հակոբյան**

.................... **Ա. Մկրտչյան**

.................... **Ա. Արշակյան**

**Քարտուղար՝** .................... **Ն.Հակոբյան**